AntiFake.am

ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փ. 1/27
Էլ. փոստ՝ antifakeam@gmail.com
Հեռ.՝ (+374 91) 57-27-18

№ 062-19 «15» նոյեմբերի 2019 թ.

**Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանին**
(Հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71,
էլ. փոստ՝ armavir@mta.gov.am,
Հեռ.՝ (0237) 2-37-16, 5-08-08)

**«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր**
**Աստղիկ Մաթևոսյանից**

**Տեղեկություն ստանալու հարցում**

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ և 42-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկություններ տրամադրել այն մասին, թե Արմավիրի մարզում ամանորյա միջոցառումների (տեխնիկական, կազմակերպչական, զարդարանքներ, համերգներ և այլն) համար ո՞րքան գումար է հատկացվել պետական բյուջեից 2014թ.-ին, 2015թ.-ին, 2016թ.-ին, 2017թ.-ին, 2018թ.-ին և 2019թ.-ին: Խնդրում եմ կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկությունները տրամադրել առանձին-առանձին, ինչպես նաև յուրաքանչյուր տարվա համար ներկայացնել առանձին գումարային չափը: Խնդրում եմ տրամադրել պատասխանները հիմնավորող փաստաթղթեր:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ն-20288-2019
15 11 2019 թ.

հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:

**Կանխավ շնորհակալ եմ՝**

**«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր՝** **Ա. Մաթևոսյան**

«15» հոկտեմբերի 2019 թ.